ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի ապրիլի 6-ի նիստի N 8 արձանագրությունից
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2019 թվականի գործունեության արդյունքների մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Ընդունել ի գիտություն «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2019 թվականի գործունեության հաշվետվությունը (կցվում է):

2. «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2019 թվականի գործունեության արդյունքները գնահատել բավարար:

Որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն (կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 6
Երևան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2020 թվականի հունվարին հրապարակվել է Փենսիլվանիայի համալսարանի Աշխարհի ուղեղային կենտրոնների գլոբալ վարկանիշավորման զեկույց 2019 (Go To Think Tank Index Report 2019), համաձայն որի՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը ներառվել է աշխարհի 100 լավագույն համալսարանական ուղեղային կենտրոնների շարքում՝ զբաղեցնելով 94-րդ հորիզոնականը, իսկ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի առաջատար ուղեղային կենտրոնների շարքում «Ամբերդը» նախորդ տարվա համեմատ բարելավել է իր դիրքերը երկու նիշով և այժմ զբաղեցնում է 59-րդ հորիզոնականը:

I. Հետազոտական գործունեություն

1. 2019 թվականի դեկտեմբերին լույս է տեսել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) գիտահանրամատչելի հանդեսի անդրանիկ համարը: «Ամբերդ» տեղեկագիրը թողարկվում է երկամսյա պարբերականությամբ, ունի բաց հասանելիություն և միտված է գործնականում լրացնել ոլորտի գիտական վերլուծություններն ու հետազոտությունները հանրության տարբեր շերտերին առավել մատչելի և ընկալելի մատուցելու դեռևս բաց տարածությունը:

Կենտրոնում շարունակվել են 2017 թվականին ձևավորված հետազոտական խմբերի աշխատանքները: Մասնավորապես.

- ***Կենտրոնում իրականացվող «Կրթական ծրագրերի ու տեխնոլոգիաների հետազոտություններ և մշակումներ» հետազոտական թեմայում իբրև կատարող ներգրավված փորձագետների և Կենտրոնի հետազոտողների կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.***

2. Մշակվել և 2019 թվականի դեկտեմբերին ընդունվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական

կենտրոնի հետազոտական թեմաների և խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգը»:

3. Մշակվել և հրապարակվել է «Աշխատաշուկայի միտումները Հայաստանում» հետազոտության հաշվետվությունը:
4. ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՊՏՀ բակալավրիական և մագիստրոսական ուսուցման համակարգում սովորողներից կազմված ֆոկուս խմբերի հարցում՝ բացահայտելու համար ՀՊՏՀ տեղեկատվական հոսքերից և ռեսուրսներից (կրթական ենթակառուցվածքներից) ուսանողների բավարարվածության աստիճանը:
5. ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՊՏՀ վարչական ստորաբաժանման ղեկավարներից, ամբիոնի վարիչներից, վարչական աշխատակիցներից և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից կազմված ֆոկուս խմբերի հարցում՝ բացահայտելու համար ՀՊՏՀ տեղեկատվական հոսքերից և ռեսուրսներից ՀՊՏՀ աշխատակիցների բավարարվածության աստիճանը:
6. Ընդհանուր առմամբ՝ 2019 թվականի ընթացքում Կենտրոնի «Կրթական գործընթացի և տեխնոլոգիաների հետազոտությունների» հետազոտական թեմայում ներգրավված են եղել Կենտրոնի 2 հաստիքային հետազոտող, իսկ որպես փորձագետներ ներգրավվել են ՀՊՏՀ 2 դասախոս, վարչական 3 աշխատակից, 4 մագիստրանտ և բակալավրիատի 1 ուսանող:

- ***Կենտրոնում իրականացվող «ՀՀ ֆինանսական շուկաների վիճակը և զարգացումները» հետազոտական թեմայում որպես կատարող ներգրավված փորձագետների և Կենտրոնի հետազոտողների կողմից իրականացվել են հետևյալ հետազոտական աշխատանքները.***

7. ՀՀ և միջազգային ֆինանսական շուկաների մշտադիտարկմամբ 2019 թվականի հունվար-մայիս ամիսներին, ամենամսյա և եռամսյակային պարբերականությամբ մշակվել և հրապարակվել են հետևյալ վերլուծական հաշվետվությունները՝
   - «Համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումները»,

- «ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը և արտարժույթի շուկաները»,
- «ՀՀ արժեթղթերի և միջբանկային վարկային շուկաներ»:

8. Ընդհանուր առմամբ՝ 2019 թվականի ընթացքում Կենտրոնի «ՀՀ ֆինանսական շուկաների վիճակը և զարգացումները» հետազոտական թեմայում ներգրավված են եղել Կենտրոնի 3 հաստիքային հետազոտող, իսկ իբրև փորձագետներ ներգրավվել են ՀՊՏՀ 2 դասախոս, 7 մագիստրանտ և 1 ասպիրանտ:

9. Կենտրոնի աշխատակիցը մասնակցել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ «ԵԱՏՄ զարգացման ժամանակակից հարացույցի մշակում՝ գլոբալ մարտահրավերների համատեքստում» թեմայով իրականացված գիտահետազոտական աշխատանքին:

10. 2019 թվականի դեկտեմբերին Կենտրոնը հանդես է եկել որպես Եվրասիական տնտեսական հանձնաժողովի «Եվրասիական տնտեսական միության գործընկեր երկրների հետ արտաքին առևտրի զարգացման հեռանկարների մշակում և ազատ առևտրի նոր համաձայնագրերի շրջանակներում Եվրասիական տնտեսական միության առևտրատնտեսական ներուժի իրացման խոչընդոտների վերացման առաջարկությունների մշակում» թեմայով գիտահետազոտական ծրագրի համակատարող և «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի պատվերով իրականացրել է «Ազատ առևտրի նոր համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության՝ որպես ԵԱՏՄ անդամ երկրի առևտրատնտեսական համագործակցության ներուժի իրացման առաջարկությունների մշակում՝ հնարավոր գործընկեր երկրների հետ արտաքին առևտրի զարգացման հեռանկարների վերլուծության հիման վրա» թեմայով հետազոտություն:

11. Կենտրոնը 2019 թվականի դեկտեմբերից որպես համակատարող ընդգրկված է ԵՏՀ «Եվրասիական տնտեսական միության զարգացման

հեռանկարների և ռիսկերի վերլուծություն գլոբալ շուկայում առևտրային պատերազմների, ֆինանսական պատժամիջոցների և հովանավորչության աճի պայմաններում» թեմայով գիտահետազոտական աշխատանքներում:

12. Իրականացվելեն «ՀՀ Տավուշի և Լոռվա մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի մշակում» և «Համայնքային տնտեսության զարգացման և ապակենտրոնացման ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական կայունության ապահովման վրա» թեմաներով դրամաշնորհային հետազոտական ծրագրեր:

13. Մշակվել և հրապարակվել է «Համայնքային տնտեսության զարգացման և ապակենտրոնացման ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական կայունության ապահովման վրա» հետազոտության ամփոփ արդյունքները ներառող հաշվետվությունը, հրապարակման է ներկայացվել «ՀՀ Տավուշի և Լոռվա մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը» հետազոտության արդյունքները ներառող հաշվետվությունը:

14. 2019 թվականին մեկնարկել է «ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի մշակում» թեմայով դրամաշնորհային հետազոտական ծրագիրը:

II. Փորձագիտական գործունեություն

15. 2019 թ. Կենտրոնի մեկ աշխատակից որպես միջազգային և բարձրագույն կրթության փորձագետ, ներգրավվել է համապատասխանաբար ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովին կից տնտեսական հարցերի հանձնաժողովում և Ասիական բանկի կողմից կրթության ոլորտի զարգացման 2020-2030 թթ. ռազմավարության մշակման խմբում:

16. Կենտրոնի մեկ աշխատակից ներգրավվել է Անվտանգության խորհրդի գրասենյակի կողմից կազմակերպված՝ Ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակման աշխատանքներին:

17. Կենտրոնի մեկ աշխատակից մասնակցել է Արտաքին գործերի նախարարությունում հրավիրված «Դեպի ծով ելք չունեցող պետություններ. տնտեսական շրջափակման խնդիրները» թեմայով փակ քննարկմանը:

18. Կենտրոնի մեկ աշխատակից մասնակցել է «ՀԿ ԴեՊո» ծրագրի շրջանակներում «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» կենտրոնի կազմակերպած հայաստանյան վերլուծական կենտրոնների առաջին համաժողովին:

19. Կենտրոնի երկու աշխատակից մասնակցել են ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնած «Գիտության ֆինանսավորման հիմնախնդիրները Հայաստանում» աշխատանքային քննարկմանը:

20. Կենտրոնում փորձաքննության են ենթարկվել և համապատասխան առաջարկությունների փաթեթներ են մշակվել.

20.1. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ,

20.2. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ,

20.3. ՀՀ-ում առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հայեցակարգի վերաբերյալ,

20.4. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Բյուջետային գրասենյակի 2020-2023 թթ. զարգացման ռազմավարության վերաբերյալ,

20.5. «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019–2023 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ:

21. 2019 թ. Կենտրոնի կողմից պատրաստվել և հրապարակվել են 51 վերլուծական հոդված՝ ՀՀ տնտեսության և հանրային կյանքի առանցքային խնդիրների առնչությամբ:

22. 2019 թ. դեկտեմբերի 23-ից մինչև 2020 թ. հունվարի 25-ը կենտրոնում հետազոտական փորձառություն են անցել ՀՊՏՀ մագիստրատուրայի 50 ուսանող:

III. Կենտրոնի աշխատակիցների մասնագիտական ակտիվություն և վերապատրաստման ծրագրերում մասնակցություն

23. Կենտրոնի անձնակազմի կողմից նշված ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, հրապարկվել է 3 հետազոտական հաշվետվություն, 1 մենագրություն, 1 ձեռնարկ (համահեղինակությամբ), 1 զեկույց, տպագրվել է 23 գիտական հոդված (որից 8-ը՝ միջազգային գիտական ամսագրերում): Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են 10 աշխատաժողովի (որից 5-ը՝ միջազգային), 12 գիտաժողովի (որից 7-ը՝ միջազգային):

24. Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են Erasmus + -ի 4 փոխանակման ծրագրի և արտերկրում կազմակերպված 2 վերապատրաստման ծրագրի, որպես հրավիրյալ բանախոս հանդես են եկել 3 դասախոսությամբ (1-ը՝ արտերկրում):

IV. Ամփոփումներ

- 2019 թ. Կենտրոնում 3 հետազոտական ծրագրերում ներգրավված է եղել 12 հաստիքային աշխատակից: Տնօրեն, տնօրենի տեղակալ-ավագ փորձագետ, ավագ հետազոտող-արտաքին դրամաշնորհների պատասխանատու, ավագ փորձագետ, փորձագետ, 3 ավագ հետազոտող, 2 հետազոտող, 1 կրտսեր հետազոտող և գործավար:
- 2019 թ. Կենտրոնում իրականացված երկու հետազոտական թեմաներում իբրև կատարող փորձագետ ներգրավված են եղել ՀՊՏՀ 5 դասախոս (1-ը՝ հասարակական հիմունքներով,) 3 վարչական աշխատակից, 11 ուսանող և ասպիրանտ:
- 2019 թ. Կենտրոնը հրապարակել է 23 գիտական հոդված (որից՝ 8-ը՝ միջազգային գիտական ամսագրերում), 3 հետազոտության հաշվետվություն, 51 վերլուծական հոդված, 1 մենագրություն, 1 ձեռնարկ (համահեղինակությամբ), 1 զեկույց:

- 2019 թ. Կենտրոնի 3 հետազոտական ծրագրերում ներգրավված 12 հաստիքային աշխատակիցները մասնակցել են 12 գիտաժողովի (որից 7-ը՝ միջազգային, 1-ը՝ արտերկրում), 10 աշխատաժողովի, Erasmus+ -ի 4 փոխանակման ծրագրի և արտերկրում վերապատրաստման2 ծրագրի:
- 2019 թ. Կենտրոնը փորձաքննության է ենթարկել և համապատասխան առաջարկությունների փաթեթ մշակել օրենքի 2, ռազմավարության 2, կառավարության 1 որոշման նախագծի և 1 հայեցակարգի վերաբերյալ:
- 2019 թ. ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների ծրագրին աջակցության նախաձեռնության շրջանակներում, համագործակցելով ՀՊՏՀ տարբեր ստորաբաժանումների հետ, Կենտրոնը համալսարանում իրականացրել է 7 ֆոկուս խմբերի հարցումներ: